Տեխնիկական բնութագիր

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի Ռուսովի և Խորենացի փողոցների հիմնանորոգում:

- Չարենցավան քաղաքի Ռուսովի և Խորենացի փողոցները անցնում են Չարենցավան քաղաքի 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ թաղամասերի միջնամասով:

- Ճանապարհի երթևեկելի մասի լայնությունը կազմում է 6մ

- Ճանապարհը ունի երկու շարժման գոտի

- Ճանապարհի երկարությամբ գոյություն ունեն մայթեր, որոնց լայնությունը կազմում է 1մ

- Հիմնանորոգման ենթակա ճանապարհի երկարությունը կազմում է 1,3կմ

- Հիմնանորոգվող ամբողջ ճանապարհը պատված է ասֆալտբետոնյա ծածկով

Նշված վերանորոգման աշխատանքներն իրենց մեջ ներառում են հետևյալ գործողությունները.

- հին և քայքայված բազալտե եզրաքարերի ապամոնտաժում՝ բետոնյա հիմքերի քանդումով,

- ասֆալտբետոնե երկշերտ հին ծածկի հեռացում (ֆրեզում) 6 սմ հաստությամբ շերտ, երթևեկելի մասում,

- ասֆալտբետոնե միաշերտ ծածկի հեռացում՝ 3 սմ շերտով,

- բազալտե նոր եզրաքարերի տեղադրում բետոնյա հիմքի վրա՝ 1750 գծմ,

- երթևեկելի մասում գոյություն ունեցող բազալտե շերտի հարթեցում,

- բազալտե խճի 15սմ հաստությամբ շերտի տեղադրում բիտումապատումով՝ 11500քմ մակերեսով, մինչև 6մ լայնությամբ,

- երկշերտ ասֆալտբետոնե ծածկի տեղադրում 9սմ շերտով՝ 11500քմ մակերեսով,

- մայթերի ավազե հարթեցնող շերտի տեղադրում 10սմ շերտով՝ 1750քմ մակերեսով,

- մայթերի սալիկապատում՝ 1750քմ մակերեսով, 1մ լայնությամբ,

- գործող դիտահորերի ծածկասալերի կարգաբերում՝ թվով 5 հատ,

- երկրորդային հումքի (ա/բ, եզրաքար) տրամադրում պատվիրատուին, բարձում և տեղափոխում համապատասխան վայր՝ մինչև 5կմ,

- շինարարական աղբի բարձում, տեղափոխում՝ մինչև 5կմ, և տեղափոխման վայրի հարթեցում:

Աշխատանքների սկիզբը նախատեսվում է՝ 2025թ հունիսի 1-ից, տևողությունը 4 ամիս: